2.11-2-MICE.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2/2.11-2-24**

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային
հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2024թ. հուլիսի 3-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) (հայտերի բացման) նիստը:

**Նիստին մասնակցում էին՝**

| | | |
|---|---|---|
| Ս.Հակոբյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ |
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ |
| Ս.Ասլիզադյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ |
| Ա.Սողբաթյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար |
| Հ.Սահակյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

***Լսեցին***

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

**Նշվեց, որ**

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված N2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝

- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում ց իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.4.1 կետի պահանջներին:

Մասնավորապես՝ ներկայացված Ծրագրի բովանդակությունը չի համապատասխանում հրավերի պահանջներին, հետևաբար հիմք ընդունելով նաև հրավերի 1.8. կետի պահանջը, Հանձնաժողովը անբավարար է գնահատել հայտը:

***Կայացավ քննարկում, որի արդյունքում***
***Հանձնաժողովը միաձայն որոշեց՝***

1. **Մերժել** Ծրագրի հավելված N2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

2. Ծրագրի հավելված N2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը լուծարել և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան (հանձնաժողովի նախագահ) - ____________

Ա.Մկրտչյան - ____________

Ս.Ասլիզադյան - ____________

Ա.Սողբաթյան - ____________

Հ.Սահակյան - ____________

Շ.Հովսեփյան - ____________